Հիմնադիր – Founder – Учредитель:
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ (ԵՊՀ)
YEREVAN STATE UNIVERSITY (YSU)
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ (ЕГУ)
www.ysu.am

Հրատարակիչ – Publisher - Издатель:
ԱՐՑԱԽԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ (ԱԵԳՄՄ)
UNION OF YOUNG SCIENTISTS AND SPECIALISTS OF ARTSAKH (UYSSA)
ОБЪЕДИНЕНИЕ МОЛОДЫХ УЧЁНЫХ И СПЕЦИАЛИСТОВ АРЦАХА (ОМУСА)
www.aegmm.org

ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽ

SCIENTIFIC ARTSAKH

НАУЧНЫЙ АРЦАХ

№ 3(6), 2020

«Գիտական Արցախ» *պարբերականն ընդգրկված է Հայաստանի Հանրապետության Բարձրագույն որակավորման կոմիտեի (ՀՀ ԲՈԿ) սահմանած դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների հիմնական արդյունքների ու դրույթների հրատարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:*

«Գիտական Արցախ» *պարբերականը կետեղված է www.elibrary.ru կայքում:*

*The **«Scientific Artsakh»** journal is included in the list of scientific periodicals acceptable for publication of the main results and provisions of doctoral and candidate theses established by the Higher Attestation Committee of the Republic of Armenia (HAC RA).*

*The **«Scientific Artsakh»** journal is posted on www.elibrary.ru website.*

*Журнал **«Научный Арцах»** включен в список научных периодических изданий, приемлемых для публикации основных результатов и положений докторских и кандидатских диссертаций, установленных Высшим аттестационным комитетом Республики Армения (ВАК РА).*

*Журнал **«Научный Арцах»** размещен на сайте www.elibrary.ru.*

«ԱՐՑԱԽ» հրատ. – «ARTSAKH» Publ. – Изд. «АРЦАХ»
ԵՐԵՎԱՆ – YEREVAN – ЕРЕВАН
2020

Տպագրվում է Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ

Համարը հրատարակության է երաշխավորել «Գիտական Արցախ» պարբերականի խմբագրական խորհուրդը

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Նախագահ՝ Արամ ՍԻՄՈՆՅԱՆ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գլխավոր խմբագիր՝ Ավետիք ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Գլխավոր խմբագրի տեղակալ՝ Թեհմինա ՄԱՐՈՒԹՅԱՆ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Անդամներ՝
Լենա ԱՍՐՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր **(Տառագոնա, Իսպանիա)**
Արծրուն ԱՎԱԳՅԱՆ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Հրանտ ԱՎԱՆԵՍՅԱՆ, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Դավիթ ԲԱԲԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, դոցենտ
Վահրամ ԲԱԼԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Խաչիկ ԳԱԼՍՏՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Ջուլիետա ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Վլադիսլավ ԳՐՈՒԶԴԵՎ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **(Կոստրոմա, ՌԴ)**
Գևորգ ԴԱՆԻԵԼՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Արման ԵՂԻԱԶԱՐՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Ալֆրեդ դե ԶԱՅԱՍ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **(Ժնև, Շվեյցարիա)**
Սեյրան ԶԱՔԱՐՅԱՆ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Մարեկ ԺԵՅՄՈ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **(Օլշտին, Լեհաստան)**
Նատալյա ԿՈՎԿԵԼ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ **(Մինսկ, Բելառուս)**
Վալենտինա ԼԱՊԱԵՎԱ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Մոսկվա, ՌԴ)**
Օտտո ԼՈՒԽՏԵՐՀԱՆԴՏ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **(Համբուրգ, Գերմանիա)**
Ռուզաննա ՀԱԿՈԲՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ
Իրինա ՀԱՅՈՒԿ, փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ **(Լվով, Ուկրաինա)**
Նազիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Մուշեղ ՀՈՎՍԵՓՅԱՆ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Գագիկ ՂԱԶԻՆՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Աշոտ ՄԱՐԿՈՍՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Էդիկ ՄԻՆԱՍՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Կարեն ՆԵՐՍԻՍՅԱՆ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Հայկ ՍԱՐԳՍՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Յուրի ՍՈՒՎԱՐՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Մաքսիմ ՎԱՍԿՈՎ, սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **(Դոնի Ռոստով, ՌԴ)**
Գարիկ ՔԵՌՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Տիգրան ՔՈՉԱՐՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գիտական Արցախ, № 3(6), 2020, Երևան, «ԱՐՑԱԽ» հրատարակչություն, 2020, 288 էջ:

«Գիտական Արցախ» պարբերականի 2020թ. 3-րդ (6-րդ) համարի տպագրությանն աջակցել է «SBS» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը:

ISSN 2579-2652

© Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորում (ԱԵԳՄՄ), 2020

Published by the Yerevan State University Academic Council Decision

The Issue is Recommended for Publication by the Editorial Council of the «Scientific Artsakh» Journal

EDITORIAL COUNCIL

Chairman: **Aram SIMONYAN**, Director of Institute for Armenian Studies of YSU, NAS RA Associate Member, Doctor of History, Professor

Editor-in-Chief: **Avetik HARUTYUNYAN**, Ph.D in Law, Associate Professor

Deputy Editor-in-Chief: **Tehmina MARUTYAN,** Ph.D in Philology, Associate Professor

Members:
Lena ASRYAN, Doctor of History (**Tarragona, Spain)**
Artsrun AVAGYAN, Doctor of Philology, Professor
Hrant AVANESYAN, Doctor of Psychology, Professor
David BABAYAN, Doctor of History, Associate Professor
Vahram BALAYAN, Doctor of History, Professor
Gevorg DANIELYAN, Doctor of Law, Professor
Khachik GALSTYAN, Doctor of Political Sciences, Professor
Gagik GHAZINYAN, Academician of NAS RA, Doctor of Law, Professor
Vladislav GRUZDEV, Doctor of Law, Professor (**Kostroma, Russia)**
Julieta GYULAMIRYAN, Doctor of Pedagogical Sciences, Professor
Ruzanna HAKOBYAN, Doctor of Law, Associate Professor
Nazik HARUTYUNYAN, Doctor of Pedagogical Sciences, Professor
Irina HAYUK, Ph.D in Philosophy, Associate Professor (**Lviv, Ukraine)**
Mushegh HOVSEPYAN, Doctor of Philology, Professor
Garik KERYAN, Doctor of Political Sciences, Professor
Tigran KOCHARYAN, Doctor of Political Sciences, Professor
Natalia KOVKEL, Ph.D in Law, Associate Professor **(Minsk, Belarus)**
Valentina LAPAEVA, Doctor of Law, Professor **(Moscow, Russia)**
Otto LUCHTERHANDT, Doctor of Law, Professor (**Hamburg, Germany)**
Ashot MARKOSYAN, Doctor of Economic Sciences, Professor
Edik MINASYAN, Doctor of History, Professor
Karen NERSISYAN, Ph.D in Economic Sciences, Associate Professor
Hayk SARGSYAN, Doctor of Economic Sciences, Professor
Yuri SUVARYAN, Academician of NAS RA, Doctor of Economic Sciences, Professor
Maksim VASKOV, Doctor of Sociology, Professor **(Rostov-on-Don, Russia)**
Arman YEGHIAZARYAN, Doctor of History, Professor
Seyran ZAKARYAN, Doctor of Philosophy, Professor
Alfred de ZAYAS, Doctor of Law, Professor **(Geneva, Switzerland)**
Marek ZEJMO, Doctor of Political Sciences, Professor **(Olsztyn, Poland)**

Scientific Artsakh, № 3(6), 2020, Yerevan, «ARTSAKH» Publishing House, 2020, 288 pages.

The publication of the 3rd (6th) 2020 «Scientific Artsakh» journal was supported by «SBS» LLC.

Издается решением учёного совета Ереванского государственного университета

Номер рекомендован к публикации редакционным советом журнала «Научный Арцах»

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

Председатель: **Арам СИМОНЯН,** директор Института арменоведческих исследований ЕГУ, член-корреспондент НАН Республики Армения, доктор исторических наук, профессор

Главный редактор: **Аветик АРУТЮНЯН,** кандидат юридических наук, доцент

Заместитель главного редактора: **Теймина МАРУТЯН,** кандидат филологических наук, доцент

Члены:
Арцрун АВАГЯН, доктор филологических наук, профессор
Грант АВАНЕСЯН, доктор психологических наук, профессор
Рузанна АКОПЯН, доктор юридических наук, доцент
Назик АРУТЮНЯН, доктор педагогических наук, профессор
Лена АСРЯН, доктор исторических наук **(Таррагона, Испания)**
Давид БАБАЯН, доктор исторических наук, доцент
Ваграм БАЛАЯН, доктор исторических наук, профессор
Максим ВАСЬКОВ, доктор социологических наук, профессор **(Ростов-на-Дону, Россия)**
Хачик ГАЛСТЯН, доктор политических наук, профессор
Ирина ГАЮК, кандидат философских наук, доцент **(Львов, Украина)**
Владислав ГРУЗДЕВ, доктор юридических наук, профессор **(Кострома, Россия)**
Джульетта ГЮЛАМИРЯН, доктор педагогических наук, профессор
Геворг ДАНИЕЛЯН, доктор юридических наук, профессор
Арман ЕГИАЗАРЯН, доктор исторических наук, профессор
Марек ЖЕЙМО, доктор политических наук, профессор **(Ольштын, Польша)**
Альфред де ЗАЙАС, доктор юридических наук, профессор **(Женева, Швейцария)**
Сейран ЗАКАРЯН, доктор философских наук, профессор
Гагик КАЗИНЯН, академик НАН РА, доктор юридических наук, профессор
Гарик КЕРЯН, доктор политических наук, профессор
Наталья КОВКЕЛЬ, кандидат юридических наук, доцент **(Минск, Беларусь)**
Тигран КОЧАРЯН, доктор политических наук, профессор
Валентина ЛАПАЕВА, доктор юридических наук, профессор **(Москва, Россия)**
Отто ЛЮХТЕРХАНДТ, доктор юридических наук, профессор **(Гамбург, Германия)**
Ашот МАРКОСЯН, доктор экономических наук, профессор
Эдик МИНАСЯН, доктор исторических наук, профессор
Карен НЕРСИСЯН, кандидат экономических наук, доцент
Мушег ОВСЕПЯН, доктор филологических наук, профессор
Гайк САРГСЯН, доктор экономических наук, профессор
Юрий СУВАРЯН, академик НАН РА, доктор экономических наук, профессор

Научный Арцах, № 3(6), 2020, Ереван, Издательство «АРЦАХ», 2020, 288 страницы.

Номер 3(6) журнала «Научный Арцах» был отпечатан при содействии ООО «SBS».

Հովսեփ Բաբայան. Ռուսաստան և Թուրքիա. համագործակցության և մրցակցության միջև.....96
Hovsep Babayan. Russia and Turkey between Cooperation and Rivalry
Овсеп Бабаян. Россия и Турция: между сотрудничеством и соперничеством

Ժաննա Հարությունյան. Ֆրանսիայի արտաքին քաղաքական ռազմավարությունը հյուսիսային Աֆրիկայի պետությունների նկատմամբ 1970-1991թթ. 105
Zhanna Harutyunyan. The French Foreign Policy in the North African Countries in 1970-1991
Жанна Арутюнян. Французская внешняя политика по отношению к северо-африканским странам в 1970-1991 гг.

Մարինե Մովսիսյան. Ցանցերի դերը Հայաստանի Հանրապետության ժողովրդավարացման և ինստիտուցիոնալացման գործընթացներում.....111
Marine Movsisyan. The Role of Networks in the Processes of Democratization and Institutionalization of the Republic of Armenia
Марине Мовсисян. Роль сетей в процессах демократизации и институционализации в Республике Армения

Նորիկ Նորիկյան. Հայաստանի Հանրապետության ռազմական քաղաքականության տնտեսական բաղադրիչի ապահովման հիմնահարցերը.....124
Norik Norikyan. Main Issues of Ensuring the Economic Component of Military Policy of the Republic of Armenia
Норик Норикян. Основные вопросы обеспечения экономической составляющей военной политики Республики Армения

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, JURISPRUDENCE, ЮРИСПРУДЕНЦИЯ

Վահե Թորոսյան. Խղճի ազատությունը անտիկ շրջանի իրավաքաղաքական մտքի համատեքստում.....131
Vahe Torosyan. Freedom of Conscience in the Context of the Legal-Political Thought of the Ancient Period
Ваге Торосян. Свобода совести в контексте право-политической мысли античного периода

Տիգրան Մարկոսյան. Կանխամտածված սնանկության հիմքով քաղաքացիաիրավական պատասխանատվության կիրառման հիմնախնդիրները.....138
Tigran Markosyan. Problems of the Enforcement of Civil Liability on the Basis of Premeditated Bankruptcy
Тигран Маркосян. Проблемы применения гражданско-правовой ответственности на основе преднамеренного банкротства

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ORIENTAL STUDIES, ВОСТОКОВЕДЕНИЕ

Վահե Հակոբյան. Իբրահիմ Ալ-Հալաբին և «Ծովերի միաձուլում» աշխատությունը.....149
Vahe Hakobyan. Ibrahim Al-Halabi and «The Confluence of the Seas» Work
Ваге Акопян. Ибрагим Аль-Халаби и его произведение «Слияние Морей»

ԽՂՃԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՏԻԿ ՇՐՋԱՆԻ ԻՐԱՎԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏՔԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ*

ՀՏԴ 34 (091)

ՎԱՀԵ ԹՈՐՈՍՅԱՆ
Եվրոպական համալսարանի իրավաբան, իրավագիտության ամբիոնի դասախոս,
իրավաբանական գիտությունների թեկնածու,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
Vaxinak91@mail.ru

Հոդվածի հիմնական նպատակն է խղճի ազատության իրավունքի էվոլյուցիոն զարգացման հիմքերի վերհանումը անտիկ իրավաքաղաքական մտքի խորապատկերում:

Հետազոտության նպատակից բխեցրել ենք հետևյալ խնդիրը՝ բացահայտել աշխարհիկ պատկերացումների հիման վրա ծնունդ առած խղճի ազատության զարգացումը անտիկ մտածողների քաղաքական ու իրավափիլիսոփայական հայացքներում, իսկ որպես առանձին խնդիրներ դիտարկել ենք անտիկ շրջանում աստվածաբանական աշխարհըմբռնումից անցումը աշխարհիկ պատկերացումներին, ինչպես նաև հին հունական և հին հռոմեական մտածողների դատողությունները խղճի ու կրոնի մասին:

Հետազոտության մեջ կիրառվել են դիալեկտիկական մատերիալիզմի, անալիզի և սինթեզի, համակարգային մեթոդները:

Հետազոտության արդյունքում եկել ենք այն եզրահանգման, որ խղճի ազատության իրավունքի սկզբնավորման ակունքները մեծապես պայմանավորված են հին հունական ու հռոմեական շրջանի իրավաքաղաքական ու փիլիսոփայական հայացքների գաղափարական ազդեցությամբ, որի հիմնաշենքի վրա հետագա դարերում առաջացել ու զարգացել է խղճի ազատության իրավունքը՝ որպես անհատի հոգևոր ինքնուրույնության կարևոր բաղադրիչ:

Հիմնաբառեր՝ *խիղճ, խղճի ազատություն, իրավաքաղաքական միտք, մարդու հիմնական իրավունքներ և ազատություններ, խղճի ազատության իրավունք:*

Խղճի ազատության իրավունքի արժեքը: Խղճի ազատության իրավունքը քաղաքակրթության զարգացման առանցքային ձեռքբերումներից է, որի արմատները սկիզբ են առնում հնագույն ժամանակների իրավական, փիլիսոփայական մտքի ակունքներից: Խղճի ազատության ֆենոմենի ծագման ու զարգացման ուսումնասիրությունը կարևորվում է նրանով, որ լինելով մարդու համանուն հիմնական իրավունքի անկյունաքարը՝ այն կանխորոշում է անհատի աշխարհայացքի ընտրության ազատությունը և ընդհանրապես անձի հոգևոր ազատությունը: Անշուշտ, խղճի

* Հոդվածը ներկայացվել է 14.05.2020թ., գրախոսվել՝ 14.05.2020թ., տպագրության ընդունվել՝ 20.09.2020թ.:

ազատությունը, որպես պատկերացումների, տեսակետների, արարքների ու վարքագծի ընտրության ազատություն, ենթադրում է անհատի վերաբերմունքը լավի ու վատի, բարու և չարի, արդարի ու անարդարի նկատմամբ: Ճիշտ է, սահմանադրական իրավունքում խղճի ազատությունը սովորաբար գնահատվում է որպես մարդու վերաբերմունքը կրոնի ինստիտուտին, քանի որ այն հնարավորություն է տալիս մարդուն ունենալ համոզմունքներ, այդ թվում՝ կրոնի վերաբերյալ, այդուհանդերձ խղճի ազատությունը չի կարելի մեկնաբանել որպես ընտրություն աշխարհի կրոնական համայնապատկերի և աթեիստական դիրքորոշման միջև[361]: Հատկանշական է, որ խղճի ազատության կողքին շարունակաբար գործածվում է մեկ այլ իրավակրոնական երևույթ՝ դավանանքի ազատությունը՝ երբեմն անհարկի շփոթ առաջացնելով դրանց ընկալման տիրույթում: Թեև այս հոդվածի անմիջական քննարկման տիրույթից դուրս է խղճի ու դավանանքի տարանջատումը, այդուհանդերձ հարկ է նշել, որ դավանանքի ազատությունը խղճի ազատության սոսկ կրոնական, դավանական մասն է, մինչդեռ ինչպես վերը հիշատակեցինք, խղճի ազատության սահմանները ավելի լայն են և դուրս են գալիս կրոնական շրջանակներից:

Խղճի ազատության՝ որպես պատմական, փիլիսոփայական, սոցիալ-հոգեբանական հասկացության առանցքը խիղճն է, որը հանդես է գալիս իբրև մարդու կողմից սեփական գործողությունների, մտքերի ու արարքների նկատմամբ ներքին բարոյական չափանիշ, յուրօրինակ սահմանագիծ, որով սահմանափակվում է մարդու վարքագծի չափը[362]: Հին աշխարհի մտածողները խիղճը համարում էին ինքն իրեն քննելու և սեփական արարքները վերահսկելու բարոյական որակ: Հարկ է նկատել, որ խղճի ազատության ծագման ու զարգացման հիմնահարցերը առավելապես ընկած են անտիկ ազատախոհական ուսմունքներում, որոնք դիցահավատամքային մտածողության փոփոխման ու վերագնահատման տրամաբանական արդյունքն էին:

Դիցահավատամքային աշխարհայացքից անցումը աշխարհիկ պատկերացումներին: Գաղտնիք բացահայտած չենք լինի, եթե ասենք, որ աշխարհի մասին սկզբնական պատկերացումները առավելապես կրել են նախնական հավատալիքների խոր ազդեցությունը: Հավատն առ գերբնական ուժերը և սեփական անզորության գիտակցումը մարդու մեջ ձևավորել են աստվածակենտրոն աշխարհընկալում և դրան համապատասխան պայմանավորել նրա կեցությունն ու գործելակերպը: Առանց կրոնագիտական մանրամասների մեջ խորանալու՝ նշենք միայն, որ այդ աշխարհընկալման հիմքերը փիլիսոփայական մտքի զարգացման հետ զուգահեռ սկսում են խոր ճեղքվածքներ տալ, նույնիսկ վերաճել աստվածամարտության[363], որի արդյունքում աշխարհի մասին կրոնաառասպելական պատկերացումները սկսում են միֆական քողից դուրս գալ և ավելի փիլիսոփայական ու աշխարհիկ բովանդակություն

---

[361] **Թորոսյան Վ.**, Հայաստանի Հանրապետության որպես աշխարհիկ պետության սահմանադրաիրավական բնութագիրը. տեսական-իրավական վերլուծություն, ԺԲ.00.02, ատենախոսություն, Ե., 2018թ., էջ 86:

[362] **Սայադյան Վ.**, Կրոնական կազմակերպությունների սահմանադրաիրավական կարգավիճակի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, ատենախոսություն, ԺԲ.00.02, Ե., 2015թ., էջ 12-13:

[363] Հին աշխարհի մտածողների երկերում բազմաթիվ հիշատակություններ կարելի է հանդիպել այսպես կոչված աստվածամարտության մասին, երբ ամենայն չարիքների հիմքում դրվում էր Աստծու մեղավորությունը: Նման աշխարհընկալումը լայնորեն տարածվում էր սկեպտիցիզմի զարգացման հետ մեկտեղ՝ կասկածի տակ առնելով կրոնական դոգմաների հեղինակությունը: Երևույթները դիտարկվում էին անվերջ ապացուցողականության մեջ, որտեղ կասկածը համարվում էր ելակետային սկզբունք: Առավել մանրամասն տե՛ս Основы религиоведения Учеб./ Ю. Ф. Борунков, И. Н. Яблоков, и др.; Под ред. **И. Яблокова**.- М.: Высш. шк., 1994, էջեր 252-254:

ստանալ: Այդ անցումն էլ ահռելի դեր կատարեց խղճի ազատության բացահայտման համար:

Նկատենք, որ մարդու իրավունքների և ազատությունների աստվածային ծագման պատկերացումները, որոնց ակունքները գալիս են դեռևս հնագույն քաղաքակրթություններից, նորովի արժևորեցին հատկապես Հին Հունաստանի փիլիսոփաները: Ըստ հույն նշանավոր պոետ ***Հոմերոսի՝ որպես իրավական չափանիշի օբյեկտիվ հիմք հանդես էր գալիս աստվածային արդարությունը, իսկ այն, ինչ համապատասխանում էր արդարությանը, ընկալվում էր որպես իրավունք***[364]: Սրան զուգահեռ՝ Հոմերոսի երկերում աստվածներին վերագրվում էին մարդկային որակներ ու մղումներ, որի դեպքում նրանք զրկվում էին անսխալական Աստծու ամենազոր կերպարից և աստիճանաբար հավասարվում շարքային մարդուն: Առասպելաբանութ–յունից անցումը դեպի ռացիոնալ գիտակցության համակարգված կերպով արտահայտվում է անտիկ մատերիալիստական դպրոցի մտածողների ստեղծագործություններում: Այդ ուղղությունը ներկայացնող Միլեթյան դպրոցի ներկայացուցիչները (Թալես, Անաքսիմանդրոս, Անաքսիմենես), ինչպես նաև հույն բնապաշտ փիլիսոփաներ Հերակլիտը, Դեմոկրիտը, Անաքսագորասը, Էպիկուրը և այլք վերանայեցին աշխարհի ստեղծման աստվածաբանական հիմքերը և դրանց տվեցին գիտական ու աշխարհիկ բացատրություններ՝ դրանով իսկ կանխորոշելով արտաքին ազդեցություններից և կապանքներից զերծ անհատի ազատ ընտրության հնարավորությունը: Այդ մտածողները աշխարհի առաջացումը պայմանավորում էին նյութական որևէ նախահիմքի գոյությամբ: Օրինակ՝ **Թալես Միլեթացին** այդ նախահիմքը համարում էր ջուրը, **Հերակլիտը**՝ կրակը, **Անաքսիմենեսը**՝ օդը: Հին հունական ազատախոհական մտքի առաջին ծիծեռնակներից մեկը համարվող **Քսենոփանեսը** (ք. ա. 6-րդ դար) հանդես եկավ դիցաբանության քննադատությամբ՝ այն համարելով մարդկային երևակայության արդյունք: **Դեմոկրիտը** ատոմիստական տեսության դիրքերից ժխտեց հոգու հավերժության գոյությունը: Ինչ վերաբերում է «խղճին», Դեմոկրիտը այն սահմանեց ոչ միայն սեփական գործողությունների, այլև մտադրությունների բարոյական գնահատական, որը փոխկապակցված է ամոթի ու պարտքի զգացումի հետ:

Դիցահավատամքային մտածողության արմատական վերափոխման և խղճի ազատության ձևավորման գործում զգալի ազդեցություն ունեցան **Հերակլիտի** բնափիլիսոփայական հայացքները: Նա պնդում էր, որ տիեզերքում ամեն ինչ շարժման մեջ է, և հանգիստ վիճակ գոյություն չունի: Տիեզերքը հակադրությունների մշտական շարժում է՝ դիալեկտիկա, որից առաջանում է ներդաշնակությունը: Սակայն սրանով Հերակլիտը չէր դառնում աթեիստ, նա ասում էր. *«...ի վերջո մարդկային օրենքները բխում են միասնական աստվածային օրենքից, որը տարածում է իր իշխանությունը որքան ցանկանում է, տիրում է ամեն ինչին և վեր է ամեն ինչից»*[365]: Այդ օրենքը Լոգոսն[366] է՝ աստվածային գիտակցությունը, որը համարվում է արդարության և իրավունքի նախահիմքը և սկզբնաղբյուրը: Հերակլիտի հայեցակարգը ըստ էության դարձավ այն իրավափիլիսոփայական հիմքը, որը հետագայում նպաստեց մարդու բնական իրավունքների և դրանց սկզբնապատճառների հիմնավորմանը:

---

[364] **Այվազյան Վ.,** Մարդու իրավունքներ և ազատություններ, ուս. ձեռնարկ, Ե., Տիգրան Մեծ, 2007թ. էջ 35:

[365] **Кессиди Ф.,** Гераклит, М., Мысль, 1982, С. 173.

[366] Լոգոսը՝ որպես հոգևոր նախահիմք, ազգերի լեզվամտածողության առանձնահատկություններից ելնելով՝ տարբեր կերպ է արտահայտվում: Չինական փիլիսոփայության մեջ այն կոչվում է «Դաո»: Հայկական լեզվամտածողությունը լոգոսին համարժեք օգտագործում է «Բանը»: Քրիստոնեության մեջ լոգոսը համարվում է Քրիստոսը:

Հարկ է ընդգծել, որ համաձայն բնական իրավունքի հայեցակարգի՝ մարդու հիմնական իրավունքները բնածին են և անօտարելի, ինչը նշանակում է, որ այդ իրավունքները պետության կողմից չեն շնորհվել և հետևաբար պետությունն էլ չի կարող այն վերցնել, այլ կարող է միայն սահմանափակել: Մարդու բնական իրավունքները բովանդակում են արժեքներ, որոնք պատմության տարբեր փուլերում տարբեր կերպ են ընկալվել: Յուրաքանչյուր դարաշրջանին բնորոշ էին վարքագծի ուրույն չափորոշիչներ[367]: Հատկանշական է, որ հունական պոլիսներում իրավունքները սահմանված էին միայն քաղաքացու համար: **Պյութագորականները** (մ.թ.ա. 6-5-րդ դարեր) սահմանեցին, որ *«Արդարությունը մյուսին հավասարով հատուցման մեջ է»:* Այդ սկզբունքը կարևոր դեր կատարեց հետագայում մարդկանց իրավահավասարության մասին գաղափարների ձևավորման գործում:

Աշխարհիկ մտածողության և խղճի ազատության զարգացման գործում զգալի ազդեցություն ունեցավ էպիկուրյան փիլիսոփայական դպրոցը: Նրա ներկայացուցիչները ժխտում էին հոգու անմահության գաղափարը և կարծում, որ գերբնական ուժերը ոչ մի կերպ չեն կարող ազդել մարդկանց կենսակերպի ու ճակատագրի վրա[368]: Դպրոցի հիմնադիր **Էպիկուրը** պետությունը համարում էր ոչ թե բնության կամ աստվածային միջամտության արդյունք, այլ մարդկային կամքով պայմանավորված միություն, որի նպատակը հասարակության անվտանգության ապահովումն էր: Ըստ Էպիկուրի՝ օրենքը մարդկային մտքի արտահայտությունն է, ասել է թե՝ դրական իրավունքը: Ակնհայտ է, որ այս գաղափարները չէին կարող ուղղակիորեն չազդել հանրային կառավարման կարգավորման վրա: ***Դեմոկրատական Աթենքում նախկին սովորույթները, որոնք աստվածային կամքի արտահայություն էին ստացել, երկարատև պայքարից հետո իրենց տեղը վիջեցին համընդհանուր օրենքներին:*** Եթե օրենքները նախասահմանված չեն Աստծու կողմից, այլ համարվում են մարդու կամքի արտահայտություն, ապա դրանք հավերժ չեն և կարող են փոփոխվել: Ահա նման ռացիոնալիստական և աշխարհիկ բնույթ ուներ անտիկ դեմոկրատիան: Ճշմարտության էությունը ոչ թե կույր հավատն է, այլ փաստերի վրա հիմնված տրամաբանությունը: Դիալեկտիկայի այն հիմնադրույթը, ըստ որի՝ *«ճշմարտությունը ի հայտ է գալիս վեճի ժամանակ»,* դարձավ փիլիսոփայական, իրավական ու բարոյական սկզբունք: Բայց քանի որ Աստծու և հավատի ամբողջական դուրսմղումը չէր կարող տեղի ունենալ, հետևաբար քաղաքական ռացիոնալիզմը համակցված էր կրոնական իռացիոնալիզմի հետ[369]: Սրան զուգահեռ՝ աստվածամերժությունը համարվում էր մեղք և խստորեն պատժվում: Հատկապես մեծ արձագանք ստացավ հայտնի փիլիսոփա **Սոկրատեսի** նկատմամբ հետապնդումը, որը ավարտվեց նրա ողբերգական մահվամբ: Այդպիսի պատժի է դատապարտվել հույն փիլիսոփա **Անաքսագորասը**, որին հաճախ համարում են աշխարհիկության հայր[370]: Նա ժխտում էր արևի ու լուսնի վերաբերյալ աստվածային բացատրությունները և դրանց տալիս գիտական մեկնաբանություն: Անաքսագորասը պնդում էր, որ լուսինը չունի սեփական լույս և իր լույսը ստանում է արևից, որն էլ իր հերթին ոչ այլ ինչ է, քան շիկացած քարե զանգված: Համանման ճակատագրի է արժանացել նաև հույն սոփեստ **Պրոտոգորասը**, որին պատկանում է *«մարդը չափանիշն է բոլոր իրերի»* անձնակենտրոն

---

[367] **Երիցյան Ա.**, Մարդու իրավունքներ. Պատմատեսական, իրավափիլիսոփայական և իրավաքաղաքական հիմնախնդիրները, գիտ. խմբ.՝ Գ.Գ. Հարությունյան, Ե.: Հեղինակային հրատարակություն, 2011թ. էջ 31:

[368] Материалисты Древней Греции: Собрание текстов Гераклита, Демокрита и Эпикура / Гераклит, Демокрит, Эпикур; АН СССР. Институт философии; Под общ.ред.,вступ.ст. **М. Дынника,** М.: Политиздат, 1955, С. 30-38.

[369] **Кессиди Ф.,** От мифа к логосу: Становление греческой философии, (2-е изд., испр., доп.), Алетейя, 2003, С. 31.

[370] **Smith G.**, A Short History of Secularism, New York, 2008, P. 21.

արտահայտությունը[371]: Ըստ Պրոտոգորասի՝ մարդկային բոլոր ընկալումներն ու դատողությունները սուբյեկտիվ են, չկա օբյեկտիվ գիտելիք, ճշմարտության ընդհանուր չափանիշ, ամեն ինչ հարաբերական է, հետևաբար բոլոր կարծիքներն էլ ճշմարիտ են: Բնական օրենքը ավելի բարձր է մարդու կողմից գրված դրական օրենքից: Մարդիկ բնությունից հավասար են, իսկ օրենքը նրանց դարձնում է անհավասար: Այսպիսով՝ Հին Հունաստանում աստվածների գոյությունը և հանրային կյանքի վրա նրանց ազդեցությունը վիճարկող մտածողները ոչ միայն արտաքսվում կամ մահվան էին դատապարտվում, այլև հայտնաբերվում և հրապարակավ ոչնչացվում էին նրանց ստեղծագործությունները՝ խլացնելով ազատախոհության հետագա տարածումը լայն զանգվածների շրջանում:

Այդուհանդերձ ուշագրավ է, որ սոփեստները կարևոր դեր կատարեցին հումանսիտական գաղափարների տարածման և խղճի ազատության զարգացման գործում: Ի դեպ, ամեն ինչի հիմքում անհատին տեսնելու անտիկ հումանիստական սկզբունքը խիստ քննադատվեց և մերժվեց իդեալիստական դպրոցի մտածողների կողմից և, մասնավորապես, **Պլատոնի**, որ երևույթների առանցքում անհատին փոխարինում էր Աստծու ներկայությամբ[372] և հասարակական կոնսոլիդացիայի կարևոր պայման համարում պետական համապարտադիր կրոնը[373]:

Խղճի ազատության ակունքները ուրվագծվում են հույն նշանավոր փիլիսոփա **Արիստոտելի** հայացքներում: Արիստոտելի պատկերացմամբ՝ մարդկային բանականությունը արտաքին ազդեցության հետևանք է՝ աստվածադիր երևույթ[374], իսկ խիղճը՝ մարդու հոգևոր առաքինություններից մեկը, որը պետք է դաստիարակել, հղկել: Ըստ Արիստոտելի՝ խիղճը բարի մարդու ճշմարիտ դատն է[375], իսկ առաքինի ու բարոյական մարդը միշտ գործում է համաձայն սեփական խղճի: Բանականության ու զգացմունքի հարաբերակցության շուրջ դատողություններում Արիստոտելը առաջնահերթությունը վերապահում էր բանականությանը՝ այն համարելով ճշմարիտ ընտրության և կենսակերպի անհրաժեշտ պայման: Այս դիրքերից մարդը ազատորեն ընտրում է իր գործողությունները և պատասխանատու է դրանց հետևանքների համար[376]:

Խղճի ապատության ակունքները Հին Հռոմում: Հին Հռոմում ևս ազատախոհությունը հող նախապատրաստեց ինչպես աստվածային («ius») և մարդկային («fas») օրենքների տարանջատման, այնպես էլ խղճի ազատության ձևավորման համար:

Հանրապետության շրջանից սկսած (մոտ թ. ա. 509թ.) աստվածային պատվիրաններով կարգավորվող ամուսնաընտանեկան, քրեաիրավական հարաբերությունները վերապահվեցին աշխարհիկ օրենսդրության կարգավորմանը և անցան այսպես կոչված քուրմ պաշտոնյաների՝ կրոնի և իրավունքի հարցերով թագավորի խորհրդական հանդիսացող ***պոնտիֆաքսների*** իրավասության ներքո:

---

[371] Տե՛ս Материалисты Древней Греции: Собрание текстов Гераклита, Демокрита и Эпикура / Гераклит, Демокрит, Эпикур; АН СССР. Институт философии; Под общ.ред.,вступ.ст. **М. Дынника,** М.: Политиздат, 1955, С. 17-18.

[372] **Платон**, Собр. соч. в 4 т., Т. 4., М.: Мысль, 1994, С. 168.

[373] История политических и правовых учений: Учебник для вузов / Под общ. ред. акад. РАН, д. ю. н., проф. **В. Нерсесянца**, 4-е изд., перераб. и доп, М.: Норма, 2004, С. 64.

[374] **Аристотель**, О возникновении животных, М., Л.: Издательство Академии наук СССР, 1940 г., С. 102.

[375] **Аристотель,** Сочинения: В 4-х т. Т. 4 / Пер. с древнегреч.; Общ. ред. А. И. Доватура., М.: Мысль, 1983., С. 184.

[376] Տե՛ս նույն տեղում, էջ 107:

Հունական անտիկ իրականության նման Հռոմում ևս կրոնը համարվում էր հանրային կյանքի անբաժանելի մաս և գտնվում էր պետական հոգածության ներքո: Ականավոր մտածող, պետական գործիչ **Ցիցերոնի** «Օրենքների մասին» աշխատության մեջ հետևողականորեն ընդգծվում է կրոնի նկատմամբ հարգանքի, աստվածներին զոհեր և ընծաներ մատուցելու՝ Հռոմի բնակչության ավանդական պարտավորությունը: Սակայն ի տարբերություն Հին հունական իրավաընկալման՝ Հռոմում աստվածանարգությունը ենթակա էր բացառապես աստվածային դատաստանի «իրավազորությանը»: Այլ կերպ՝ պատմիչ **Տակիտոսի** խոսքերով ասած՝ կրոնի ոլորտում կարելի է ***«մտածել այն, ինչ ցանկանում ես և ասել այն, ինչ մտածում ես»***[377]***:***

Եզրահանգում: Այսպիսով՝ նպատակ չհետապնդելով անդրադառնալ անտիկ շրջանի բոլոր տեսաբանների դատողություններին՝ պարզորոշ նկատում ենք, որ անտիկ շրջանի իրավաքաղաքական միտքը զգալի ազդեցություն է թողել խղճի ազատության սկզբնավորման ու զարգացման գործում: Խղճի ազատության բովանդակությունը կազմող անհատի պատկերացումների ու արարքների ազատ ընտրության և դրանց ներքին գնահատման հնարավորությունը ոչ միայն նպաստեց մարդու բնական իրավունքների հարստացմանը, այլև հղկվեց ու մշակվեց այդ իրավունքների զարգացման ընթացքում՝ հետագայում ամբողջանալով որպես խղճի ազատության իրավունք:

FREEDOM OF CONSCIENCE IN THE CONTEXT OF THE LEGAL-POLITICAL THOUGHT OF THE ANCIENT PERIOD

VAHE TOROSYAN
European University, Department of Law, Lawyer,
lecturer, Ph.D. in Law,
Yerevan, Republic of Armenia

The main purpose of this article is to find out the basis for the evolutionary development of the right to freedom of conscience, in the context of ancient legal and political thought.

The aim of the research is to identify the development of freedom of conscience based on secular ideas in the political and legal views of ancient thinkers, and to consider the transition from theological understanding to secular ideas in ancient times, as well as the judgments of the ancient Greek and ancient Roman thinkers about conscience and religion.

In the research dialectical materialism, analysis and synthesis, systematic methods were used.

The research concluded that the origins of the right of freedom of conscience are largely due to the ideological and political influence of the ancient Greek and Roman period, on the basis of which the right to freedom of conscience developed as a component of individual self-determination.

Keywords: *conscience, freedom of conscience, legal-political thought, fundamental human rights and freedoms, right of freedom of conscience.*

[377] **Стецкевич М.**, Свобода совести: Учеб. пособие, СПб.: Изд-во С.-Петерб. ун-та, 2006, С. 17.

СВОБОДА СОВЕСТИ В КОНТЕКСТЕ ПРАВО-ПОЛИТИЧЕСКОЙ МЫСЛИ АНТИЧНОГО ПЕРИОДА

ВАГЕ ТОРОСЯН
юрист Европейского университета,
преподаватель кафедры права,
кандидат юридических наук,
г. Ереван, Республика Армения

Основная цель статьи – раскрыть основы эволюционного развития права на свободу совести на фоне древней правовой и политической мысли.

Целью исследования стало выявление развития свободы совести на основе светских идей в политических и правовых взглядах древних мыслителей и рассмотреть переход от богословского понимания к светским идеям в древности и суждения древнегреческих и древнеримских мыслителей о совести и религии.

В исследовании использованы методы диалектического материализма, анализа и синтеза, а также системный метод.

В статье приводится вывод о том, что истоки права на свободу совести во многом связаны с идеологическим и политическим влиянием древнегреческого и римского периода, на основе которого развивалось право на свободу совести как компонента индивидуального самоопределения личности.

Ключевые слова: *совесть, свобода совести, право-политическая мысль, основные права и свободы человека, право свободы совести.*